15433

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«28» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0205-23

Ձեռնարկողը՝ *«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ*
ք.Երևան,Ս.Վրացյան 73

Գործունեությունը՝ *«Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան № 139 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցում*
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0205-23

«28» 11 2023թ.

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից ներկայացված՝ Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան № 139 ավագ դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Նոր-Նորք վարչական շրջան, Ն. Ստեփանյան փողոց № 3

Ներածական մաս. ՀՀ Երևան քաղաքի Կ. Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոցի կառուցումն իրականացվելու է Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման (ԿԲԾ ԼՖ) ծրագրի շրջանակներում՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին 2023 թվականի մայիսի 3-ին ընդունված օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8)-րդ կետի, ա) ենթակետի համաձայն՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 քմ-ը /նախատեսվող դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 3250 քմ, սալվածքներ և ճանապարհներ՝ 3300 ք.մ/:

Նախատեսվող դպրոցի նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման № 1282228 վկայականը՝ 1,4363հա /ծածկագիրը՝ 01-008-0021-0065/, Երևանի քաղաքապետի կողմից 2023 թվականի հունիսի 13-ին տրված № 01/18-07/1-Դ-50047-358 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն):

Նկարագրական մաս. Դպրոցի շենքի կառուցման համար նախատեսվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի, Նոր-Նորք վարչական շրջանի Ն. Ստեփանյան փողոցի № 3 հասցեում: Երևանը՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը, գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում և ունի մոտ 230 կմ² մակերես: Քաղաքի բարձրությունը ծովի մակերևույթից 865-1390մ է:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցնի նստվածքների հողմահարված, էրոզիոնդենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքում և տարածքին բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Ջրսեռ-Ջրսեռի

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

հրաբխային սարավանդների լանջերը, որոնք արևելքից արևմուտք հարում են Երևան քաղաքի ցածրադիր գոտուն:

Գործունեություան իրականացման տարածքում կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքների իրականացման համար:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

Դպրոցական համալիրը կառուցվել է 1960-ական թվականներին, տեղադրված է մեծ թեքությամբ տեղանքում, ինչի հետևանքով դպրոցի մասնաշենքերի առաջին հարկերի հատակների նիշերը միմյանցից տարբերվում են մինչև 2.5 մ-ով:

Ելնելով Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Ստեփանյան փողոց 3 հասցեում գտնվող Կ.Դեմիրճյանի անվան համար 139 ավագ դպրոցի մասնաշենքերի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումների առանձնահատկություններից, փաստացի տեխնիկական վիճակից, շահագործման ժամկետից, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնաշենքերը նախագծվել ու կառուցվել են 7-8 բալ սեյսմակայունության հաշվարկով, իսկ ըստ ՀՀ ներկայումս գործող ՀՀՇՆ II-6.02-2006 նորմերի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիացման (շրջանացման) քարտեզի՝ Երևան քաղաքի տարածքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում՝ գետնի սպասվելիք առավելագույն Amax=0.4g արագացումով, գտնում ենք, որ սեյսմազինվածության բարձրացման աշխատանքների ծախսերը կգերազանցեն համապատասխան տեխնիկատնտեսական արդարացված ծախսերիը, ուստի ավելի նպատակահարմար է դրա ապամոնտաժումը և նորի կառուցումը:

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Ստեփանյան փողոց 3 հասցեում գտնվող Կ.Դեմիրճյանի անվան № 139 ավագ դպրոցը նախատեսվում է 10-ից 12-րդ դասարանների մինչև 600 աշակերտների համար:

Դպրոցն իրենից ներկայացնում է չորս հիմնական (A, B, C, D) մասնաշենքերից բաղկացած համալիր: A, B և C մասնաշենքերը եռահարկ են, բայց ունեն տեխնիկական հարկ, որտեղով անկացված են կոմունիկացիաները: Նշված մասնաշենքերում հիմնականում տեղաբաշխված են ուսումնական և վարչական շենքերը: ՈՒսումնական դասասենյակները, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներն իրենց հարակից պահոցներով, ինչպես նաև վարչական բլոկը տեղավորված են A և C մասնաշենքերում: Վարչական բլոկը ներառում է տնօրենի և փոխտնօրենների աշխատասենյակները և վարչական աշխատողների համար առանձնացված սանհանգույց: Նույն ուղղությամբ՝ մյուս հարկերում նույնպես կան սանհանգույցներ ուսուցիչների համար:

Առաջին հարկում, մուտքին մոտ տեղակայվելու են բուժկետը և ուսուցչանոցը: Երկրորդ հարկում նախագծված է նաև նախնական զինվորական պատրաստության դասասենյակը, որին կից զենքի պահեստի պատերն ամրանավորված են, իսկ պատուհանի և դռան վրա նախատեսված է ճաղաշար: Ուսումնական բոլոր բլոկներում նախատեսված են ռեկրեացիաներ, աջ և ձախ թևերում նաև սանհագույցներ՝ աղջիկների և տղաների համար, ինչպես նաև առանձնացված սանհանգույց՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ընդհանրապես, վերջիններիս համար ամբողջ շենքը և բացօթյա տարածքների մատչելիությունն ապահովված է թեքահարթակներով, 4 կանգառ ունեցող վերելակով:

B մասնաշենքի նախամուտքի կենտրոնական մասում դրված է վերելակը և աստիճանավանդակը: Ճաշարանի խոհանոցային բլոկը ներառում է նորմերով անհրաժեշտ պահանջները և շենքի ետնամասից ունի առանձին մուտք՝ անձնակազմի և մթերքի մատակարարման համար: Ճաշարանի վերևում՝ երկրորդ հարկում, կազմակերպված է ընդարձակ գրադարանը, որի երկու մուտքերի հանգույցներում գրադարանավարների

առանձնացված հատվածներն են: Երրորդ հարկում շուրջ 280 նստատեղով հանդիսատեսային դահլիճն է: Հանդիսատեսային դահլիճից և գրադարանից տարհանման ելքեր են նախատեսված դեպի շենքին կից մետաղական աստիճանավանդակ: 2-րդից 3-րդ հարկերում նախագծվել է ռեսուրս կենտրոն, որի կենտրոնում գտնվող ամֆիթատրոնն իր աստիճաններով կապում է երկու հարկերը: Երկու հարկերն ընդգրկող կորաձև մեծ վիտրաժից տեսարան է բացվելու դպրոցի առջևի բարեկարգ, կանաչապատ տարածքը, ամֆիթատրոնը և ջրավազանը:

D-ն մարզական մասնաշենքն է, ուր նախագծվել է միայն մարզասրահը, որն ունի նաև տարհանման առանձին ելք: Հանդերձարանները (ցնցուղարաններով և սանհագույցով), գույքի պահեստը, մարզիչի սենյակը, հաշմանդամություն ունեցողների սանհագույց-լոգարանը տեղակայված են C մասնաշենքում: Մարզական բացօթյա հրապարակը ներառում է ունիվերսալ մարզական միջուկ, վոլեյբոլի, բասկետբոլի համատեղված դաշտ, թեթև ատլետիկայի վազքուղի-թռիչքուղի, մարզական սարքավորումների համար առանձնացված հարթակ: Քանի որ մարզական բացօթյա մասը բարձրադիր է, նախատեսվել են թեքահարթակ և աստիճաններ դեպի վեր: Ընդ որում՝ տարածքը մարզադահլիճի տարհանման ելքից առավելագույնս մատչելի է:

Ամբողջ դպրոցը նախատեսվում է ցանկապատել: Դպրոցն ունի 4 մուտքեր դարպասներով, որոնք կապահովեն հրշեջ և շտապ օգնության մեքենաների անմիջական մուտքը ողջ տարածք:

Բոլոր մասնաշենքերի նկուղային հարկերում նախատեսվում է կառուցել ապաստարաններ՝ ՀՀ գործող նորմատիվներին համապատասխան:

Նախնական ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում՝ բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերից հայտնաբերվել են թվով 5 գիհիներ, որոնք կվերատնկվեն դպրոցի տարածքում:

Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

հողամասի մակերես՝ 14363 քմ,
կառուցապատման մակերես՝ 3270 քմ- 22%,
կանաչապատման մակերես՝ 6363 քմ – 45 %,
ճանապարհներ, սալվածքներ՝ 3300 քմ – 23 %,
սպորտ հարթակների մակերեսւ՝ 1430 քմ – 10 %,

Նախատեսվում է կառուցել, նոր լանջավոր տանիքներ: Ծածկույթի համար կօգտագործվի պրոֆիլավորված ալիքաձև ցինկապատ թիթեղներ: Մասնաշենքերի տանիքը կունենա կազմակերպված արտաքին ջրահեռացում:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության տեխնիկական լուծումները նախագծվել են Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի № 426-Ն որոշման դրույթների համաձայն:

Ներքին հարդարման աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերից: Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն են դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժն՝ ապահովող և այլ հարմարեցված լուծումներին:

Դպրոցի նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխությանն համակարգերի ինժենարական լուծումները՝ ըստ տրամադրված տեխնիկական պայմանների և ՀՀ շինարարական նորմերի:

Դպրոցի կառուցման նախագծի ջրամատակարարման և ջրահեռացման մասը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի, ՇՆ-ՋԿ 40-01,01-2014 գործող շինարարական նորմերի և կանոնների, ինչպես նաև Վեոլիա Ջուր ընկերության կողմից 08.01.2020թ. տրված ԵԼԻg-49 ԱՐ-6158 տեխնիկական պայմանի:

Ջրամատակարարման և Կոյուղու մասով նախագծում նախատեսվում են ներքին և արտաքին հետևյալ համակարգերը.

1. խմելու տնտեսական ջրամատակարարում,
2. կենցաղային կեղտաջրերի կոյուղի,
3. ջրամբար,
4. պոմպակայան,

Նախագծային լուծումներն ընդունված են համյաձայն СНиП 2,04,01-85, ՀՀՇՆ 40-01,01-2014: Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն СНиП 3,05,01-85:

Վերակառուցվող դպրոցի ջրամիացումն իրականացվում է գործող ø200մմ տրամաչափի ջրագծից: Նախատեսված է երկու մուտքագիծ:

Գազամատակարարման և էլեկտրասնուցման արտաքին ցանցերի իրականաւցումը (միացումները) կատարվում են անմիջապես «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից, որոնք ներկայումս ապահովում են գոյություն ունեցող դպրոցի կարիքները: Տեխնիկական պայմաններ չկան: Արտաքին գազատարի միացման տեղը և պայմանները չեն փոխվում:

Ջեռուցման, օդափոխության և էլեկտրամատակարման նախագծերն իրականացվել են համաձայն ՀՀ-ում գործող նորմաների և կանոնների:

Քիմիայի և կենսաբանության դասարաններում նախատեսված են քարշիչ պահարաններ: Սանհանգույցներից, դասարաններից օդի արտածումն իրականացվում է բնական եղանակով:

Կաթսայատան աշխատանքային նախագիծը մշակված է նախագծային առաջադրանքի հիման վրա՝ համաձայն СНиП II-35-76: Ջերմության հաշվարկային ծախսը կազմում է Qջ.=527002.0 կկալ/ժամ-613.3ԿՎՏ/ժ: Նախագծով նախատեսվում է գոյություն ունեցող կաթսայատանը ապամոնտաժել բոլոր խողովակներն ու սարքավորումները, քանի որ գործողը չի համապատասխանում ներկայիս պահանջներին:

Բարեկարգման և կանաչապատ գոտիների աշխատանքների շրջանակը կներառի 9600քմ տարածք, մասնավորապես, կբարեկարգվի (սալարկում) 3300 ք.մ տարածք և կստեղծվի 6300 ք.մ մակերեսով կանաչ գոտի:

Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է հաշվի առնելով Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի № 108-Ն որոշմամբ հաստատված բնակավայրերի՝ կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Սույն նախագծով նախատեսվում է տեղանքի՝ բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող ծառերի (50 հատ) տնկում, մասնավորապես՝

- Թույա-18 հատ
- Սոճի-20 հատ
- Եղևնի-12 հատ:

Կանաչապատ մակերեսում կիրականացվի նաև սիզամարգերի ցանքս: Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի նոր ոռոգման ներքին ցանցի միջոցով, որը կմիացվի քաղաքային ոռոգման համակարգին: Ոռոգումը կիրականացվի կաթիլային և անձրևացման եղանակներով:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախատեսված է իրականացնել հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- առաջին հարկից վերև ներսում քանդման աշխատանքների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն աղբահան խողովակներ,
- քանդված մնացորդները, փորված հողը և նյութերը պետք է պահվեն վերահսկվող տարածքում և դրանց վրա պետք է ջուր ցողալ՝ փոշին նստեցնելու նպատակով,
- պնևմատիկ փորման կամ ծածկի ու հիմքերի քանդման ժամանակ փոշին պետք է նստեցնել անընդհատ ջուր ցողալով և/կամ հրապարակում տեղադրելով փոշին նստեցնող ծածկոց,
- շրջակա միջավայրը (մայթերը, ճանապարհը) պետք է զերծ պահվի հողից և մնացորդներից՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով,
- շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը պետք է սահմանափակվի համաձայնեցման մեջ նշված ժամերով,
- հրապարակում պետք է իրականացվեն էրոզիայի և նստվածքների կարգավորման համապատասխան միջոցառումներ, օրինակ՝ տեղադրվեն հարդի պարկեր և/կամ նստվածքի հեռացման ցանցեր՝ նստվածքների հրապարակից հեռացումը, և ջրահեռացման համակարգում ու մոտակա ջրհոսքերում և գետերում ավելցուկային տուրբուլենտությունը կանխելու նպատակով,
- աղբի հավաքումը, դրա հեռացման ուղիները և տեղադրման վայրերը պետք է հստակեցվեն աղբի հիմնական տեսակների համար, որոնք կառաջանան փորումից, քանդումից և շինարարական գործունեությունից,
- շինարարական և քանդման աշխատանքներից առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղանքում դրանց բաժանումը իրականացնելով և համապատասխան կոնտեյներներում պահելով,
- սանիտարական աղբի և շինարակական հրապարակներից (տեղադրում կամ վերակառուցում) եկող կեղտաջրերի մշակման մոտեցումները պետք է հաստատվեն տեղական իշխանությունների կողմից,
- վտանգավոր և թունավոր նյութերի ժամանակավոր պահպանումը պետք է իրականացվի ապահով կոնտեյներներում՝ նշելով դրանց բաղադրության, հատկությունների և մշակման վերաբերյալ տեղեկությունները,
- վտանգավոր նյութեր պարունակող կոնտեյներները պետք է տեղադրվեն անջրաթափանց կոնտեյների վրա՝ արհատոսքը բացառելու նպատակով:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումն իրականացնում է աշխատանքների ղեկավարը
- Հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում:
- Մինչ աշխատանքների սկիզբը՝ շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղերով, իսկ

աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

• Օգտագործումից առաջ հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

• Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

• Նախատեսվող դպրոցական համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով՝ կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:

• Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում հարկավոր է ղեկավարվել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի № 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով: Ըստ նախնական գնահատման՝ ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում՝ արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Դպրոցական համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի, փոշու, (CO, NO) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
- Աղմուկի թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում եվ բնակելի կառուցապատման տարածքներում սանիտարական նորմեր» N2-III-11.3, ՀՀ առողջապահության նախարարության 2002 թ. մարտի 6-ի N 138 հրաման/:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
- Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն Կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի № 87 արձանագրության, Առողջապահության

նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն և 2017 թվականի փետրվարի 28-ի թիվ 12-Ն, 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138, 2006 թվականի մայիսի 17-ի թիվ 533-Ն, և 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների:

Պատճառաբանական մաս. Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առընչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Փորձաքննական պահանջներ

1. Ավագ դպրոցի վերակառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
   - ✓ շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
   - ✓ շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
   - ✓ շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
   - ✓ բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համայնքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
7. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից ներկայացված Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան № 139 ավագ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Մ. Սարոյան